

կատով դուրս եկան Քալանտար փաշայի դէմ :

Կառավարութիւնը հանդիպելով հայերու ուժեղ դիմադրութեան, մտածեց իր նպատակներուն հասնիլ խորամանկութեամբ, օգտուելով Ձէյթունի ներքին պառակտումներէն: Եւ իրաւ, հետզհետէ օսմանեան զօրքերը կրցան ա՛րբանալ Ձէյթունի մէջ, ու Քալանտար փաշան ժամանակը հասած նկատեց աւելի ճնշիչ միջոցներու գիմելու, եւ պահանջել 20,000 զրշ ի տուրք մը ամբողջ Ձէյթունէն: Ձէյթունցիները տեսնելով որ թշնամին կ'օգտուի իրենց պառակտումներէն, միացան, Վասիլի նշանաւոր աւետարանի վրայ երգում ըրին եւ յարձակեցան Քալանտար փաշայի վրայ, ու զայն դուրս քշեցին Ձէյթունէն, որով զանազան ցեղախումբերու ոտնձգութիւններուն ալ առաջքը առին: Ազախին, իր «Ձէյթուն» գրքին մէջ կ'ըսէ թէ՛ այդ դէպքէն յետոյ՝ Ձէյթունի չորս թաղերը ընդմիշտ միացան թշնամու վրտանդին դէմ:

Քանի մը տարի յետոյ, 1810-ին, Ձէյթունցիները այնքան կը զօրանան, որ կ'արշաւեն Մարաշի շրջակայ գիւղերու վրայ, եւ երկու անգամ կը գրաւեն Մարաշ քաղաքը եւ քանի մը շարաթ կը պահեն իրենց ձեռքը:

1835-ին երբ Եգիպտոսի Իբրահիմ փաշան (նշանուոր Մէհմէտ Ալի փաշայի տղան) մըտնելով Կիլիկիա, կ'ուզէր վերջնական հնազանդութեան բերել Ձէյթունցիները, ինչպէս նաեւ ուրիշ կէս անկախ ցեղախումբերը, Ձէյթունցիներն ու Փօշան Օղլու\*) աշխրէթը միացեալ ուժերով դուրս եկան եգիպտական զօրքերուն դէմ, որմէ յետոյ Իբրահիմ փաշան այլեւս փորձ չըրաւ զանոնք հնազանդեցնելու: Վաթսունական թուականներուն թրքական կառավարութիւնը կրցաւ հարուածել թէ՛ Ձէյթուն-

ցիները եւ թէ՛ վերը յիշուած ցեղերը, որոնք այս անգամ դիտակցութիւնը չունեցան միասին դուրս գալու ընդհանուր թշնամուն դէմ:

Ինչպէս տեսանք, 1805-ին թրքական կառավարութիւնը կրցած էր Ալբիստանի իսլամ ցեղերը, ինչպէս նաեւ քիւրտ աշխրէթները միացնել իրեն՝ Ձէյթունը ճնշելու համար: Պէտք է խոստովանիլ որ թուրք կառավարութիւնը ճկուն էր իր խարդախ գործելակերպի մէջ, այն աստիճան, որ կարողացաւ յետոյ, 1849 թուականին հայերը հանել քիւրտերուն դէմ, այս անգամ զանոնք ճգմելու համար: 1849-ին Աքճատաղի (Ձէյթունի հիւսիս) քիւրտերը ապրտամբեցան Թուրքիոյ դէմ եւ իրենց անկախ հռչակեցին: Կառավարական ուժերը չարաչար պարտութեան մատնուեցան: Կառավարութիւնը միջցեղային կռուէն ուղեց օգուտ քաղել եւ մտածեց սիրաշահիլ Ձէյթունը: Այդ ատենուան վարչապետը կը խոստանայ Ձէյթունցիներուն տալ ինքնավարութիւն, եթէ օգնեն կառավարութեան Աքճատաղի ճնշման գործին: Ձէյթունցիները կ'ընդունին օսմանեան կառավարութեան առաջարկը, պայման դնելով որ Ձէյթունցիները պիտի ունենան բոլորովին անջատ ու անկախ զօրամաս մը իրենց սեփական հրամանատարներով: Բնական է կառավարութիւնը ընդառաջ կ'երթայ անոնց այդ պահանջին. ու Ձէյթունցիները կ'արշաւեն Աքճատաղի վըրայ: Քրտական այդ զօրեղ աշխրէթը կը պարտուի հայ լեռնականներէն. ու ատկէ յետոյ միայն թրքական կանոնաւոր զօրքերը կը գրաւեն Աքճատաղը եւ մեծ աւերներ կը գործեն հոն:

Օսմանեան կառավարութիւնը որքան անհամբեր կը դառնար եւ որքան ջրայնոտ շարժումներով իր բազուկը կ'երկարէր ինքնիշխան շրջանները թեւարկելու, այնքան յաճախակի

\*) Այդ ցեղախումբերու մասին հետեւեալ համառոտ տեղեկութիւնը կայ «Կիլիկիա» գրքքին մէջ. — «Քիւրտերն ու թիւրքմէնները բարքերով շատ նման են իրարու. անոնք միշտ ապրտամբ վիճակի մէջ եղած են: 1865-ին քօլէրան մեծ վնաս տուած է անոնց. կառավարութիւնը ուզած է օգտուիլ անոնց տկարութենէն եւ վերջնականօրէն ճնշել զանոնք: Անոնց ամենէն զօրեղ երկու բէկերը, Քօշան-Օղլու եւ

Քիւշիւք-Ալի-Օղլուն գիմադրեցին: Ատանայի այդ ատենուան ընդհանուր նահանգապետ Ձէյվաթ փաշան կանոնաւոր զօրք գրկեց անոնց դէմ եւ շատ ճնշիչ միջոցներով միայն հնար եղաւ նրանց հնազանդեցնել: Իսկ ցեղապետները բռնուեցան եւ աքսորուեցան»: (Կիլիկիա, Փորձ Աշխարհագրութեան Արդի Կիլիկիոյ, էջ 42-43):